№ 85 ՈՒՐԲԱԹ, 25 ԱՊՐԻԼԻ ԵՐԿՐՈՐԴ 1919 ՏԱՐԻ ՈՒՐԲԱԹ, 25 ԱՊՐԻԼԻ № 85

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի

Խմբագրութիւնը բաց է ամէն օր առ. ժամը 9-ից մինչև 3-ը։ Յօդուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։ Յօդուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։ Ընդունուած յօդուածները, որոնց տակ չէ գրուած վարձատրութեան պահանջ, կը համարուեն ձրի։

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

Յայտարարութիւններն ընդունւում են ամէն լեզուով առաջին երեսում 1 ռուբ., իսկ վերջին երեսում՝ 75 կոպ. Բժիշկների և աշխատանք փնտրողների համար որոշ զեղչ։ Մահազդի համար 25 ռուբլի։ Յայտարարութիւնները նոյն օրուայ թերթի համար ընդունւում են մինչև ժամը 2-ը։

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹ.
ապրիլի 1-ից
ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ
ՕՐԱԹԵՐԹԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է.
1 ամիս . . . . 18 ռուբ.
3 » . . . . 50 »
Հատավաճառ . . . . 1 ռուբ.
Հասցէն՝ Тифлисъ, Головинскій пр. № 41.
Դրասենեակը բաց է ամէն օր առա. ժամը 9-ից մինչև 3-ը, բացի կիրակի և տօն օրերից։ Телефонъ 16-90.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱՅԻ ագիտացիոն կուրսեր

Ուրբաթ, ապրիլի 25-ին, երեկոյեան ժամը 8-ին կուսակցութեան բիւրոյում (Голов. 41).

ՏԻԳՐԱՆ ՀԱԽՈՒՄԵԱՆԸ

կը խօսէ

„Մեր ծրագրի հիմնական կէտերը“

Նիւթի մասին։ Մուտքը ազատ է Ուսանողական և Աշակերտական ֆրակցիաների անդամների համար։ 1—1

Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների Քննիչ Յանձնաժողովը

ՀՐԱՒԻՐՈՒՄ Է

բոլոր այն անձանց, որոնք հարիւր հազար ռուբլու և աւելի գումարի վնասների յայտարարութիւն են ներկայացրել, ներկայ լինել խորհրդակցութեան, որ տեղի է ունենալու ուրբաթ, ապրիլի 25-ին, երեկոյեան ժ. 6-ին (վեցին) Միջազգային բանկում (Международный банкъ), Սոլոլակսկայա, № 7. 1—1

Գողթան Ապահովութեան Կոմիտէն

կազմակերպել է մասնաւոր անձանց համար փողի և նամակների փոխադրութիւն Դաշնակիցների օգնութեամբ Ագուլիս և գիւղերը։ Պատուէրների համար չտալ դիմելու Կոմիտէի գանձապահ Աւետ. Ձորդարեանցի դրասենեակը ամէն օր, առա. 10—1-ը. (Вельяминовская, 22). 3—1

ԲԺԻՇԿ
Խ. ԷՅԵՐՋԵԱՆ
Նախկին ասիստենտ Պարիզի Hôtel-Dieu, պրոֆ. Gilbert-ի կլինիկաների, մասնագէտ թոքերի, սրտի, ստամոքսի, լեարդի, աղիքների և երիկամց հիւանդութիւնների։ Մեթոդիկ բժշկում թոքախտի, պլեվրիտի, բրոնխիտի, անարիւնութեան, լեարդի ուռեցքի, arteriosclerose-ի (շնչերակների կարծրանալ) սրտային անկարողութեան (էմբութացիա)։ Արմատ. բժշկում գլխացաւի, կերակրութիւն ընթերային մասամբ սրտի հիւանդութեանց համար։ Ընդունելութիւնը առաւօտ. ժամը 10—1, երեկոյեան ժ. 5—7, կիրակի օրերը միայն 10—1։ Հասցէ՝ Միքայէլեան փ. № 41. 100—13

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ
Նախկին ասիստենտ Բեռլինի եւ Մոսկուայի համալսարանների կլինիկաների։ Մասնագէտ ներքին հիւանդութիւնների — թոքերի և սրտի. ընդունելութիւնը՝ իր ռենտգենեան և լոյսի ու էլեկտրաբուժական կաբինետում։ Հետազօտութիւնք և բժշկութիւնք X ճառագայթներով։ Ամէն օր, 9—1 և 5—8 ժամը երեկ. Բեհբուտովսկայա փ., № 23. Հեռ. 7—92. 100—66

ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԵՐ

Չիչերինի նոտան։
„Հումմէթ“-ի դրօշումները։
100 միլիոնի նոր բոներ։
Սոչիի շրջանի դրութիւնը։
Ջօրահաւաք Կուբանի եւ Դոնի շրջաններում։
Բագուի նոր կաբինետը։

ՍՆԱՆԿԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Հազուադէպ նորաձևութիւնը՝ մոդան բռնկւում է անհատական ճաշակից և տարածւում է պատահանքների սիրահարներին կարողէն հագնուել ու զարդարուել այն ձևով, որ մոդայի հեղինակներն են հնարում՝ շահադիտութեան նպատակով, որոնք իրենց բնաւ բանեցնելու չունեն՝ չաւանով նոր ձև են ներմուծում և հինը դէն ձգում։

Նորաձևութեան զոհերն՝ իրենց ինքնուրոյն ճաշակից ձեռք քաշելով, կարծում են նոա նրան հետևելով ընթանալու առաջութիւնը։ Ով կը համարձակուի նորաձևութեան հակառակ հագնուել ու պճնուել և իր վրայ ծաղր ու ծիծաղ շարժել։ Տիկինները միայն, որոնք իրենց անհատական ճաշակը դէն չեն քշում մոդայի գիրկը, որոնց նրա ծաղրն ու ծանակը արհամարհելու արիութիւնն ունեն։

Այդպէս է և մտքերի նորաձևութիւնը՝ մոդան քաղաքական և հասարակական խնդիրներում։ Տարաբախտաբար, մասնաւոր հեղինակներ մասնագիտութեան և հասարակական կարգերի կերպեր են առնչւում և յանձնում մոդային։ Ամբոխն ու ամբոխավարներն ընդունում գաղափարները մեծ մասամբ ապառազում, ծայրայեղութեան են հասցնում, իրենց անհատական ճաշակով գունաւորում և ծախում, տարածում ամբոխի մէջ։ Սկսւում է մտքի մոդան, լսւում են անհատական անկախ մտածումները և գերի դառնում տիրող հոսանքին։ Այդ ընթացքի հոսանքին հակընթաց լողալը դժուար է և ամէն մարդու բանը չէ. այդպէս հոսանքով տարածուող մոդայական մտքերի դէմ լեզու հանելը դժուար է և վտանգաւոր, ուստի և ամէն մարդու բանը չէ։

Շուրջ երեք տարի է, որ լայնածաւալ Ռուսաստանում յաղթում է «սոցիալիզմ» խօսքը իր զէս-զէս փոփոխակներով՝ սոցիալ-յեղափոխական, սոցիալ-դեմոկրատ, սոցիալ-մեծամասնական, սոցիալ-փոքրամասնական, սոցիալ-ազգայնական, սոցիալ-անիշխանական, սոցիալ-ֆեդերալիստ և այլն և այլն։

Եւ սոցիալիզմի փրփրուն ճառերից ծփացող հոսանքը մի անկիւն գետ է դարձել, որ քշում տանում է կամազուրկ ամբոխին, որ հոգու անկախութիւնն է կորցրել ու անընդունակ դարձել քննադատելու և քրքրելու թէ՝ մի բարձր գաղափարի ճշմարտութիւնը մէկ կը լինի։ Իսկ երբ նա բամբ-բամբ է ու ժամանցներում իրար հակասող, հերքւի է, վերածւում՝ կեղծաւորութիւն չէ։ Ամենայն ճշմարտութիւն, որ ինքն իր մէջ քանդւում է, կործանւում է։

Ես ուզում եմ իմ մտքերը հաղորդել «Ժող. Ձայն»-ի ընթերցողներին հակիրճ քննադատութեամբ ենթարկելով պաշտամունքի խօսք դարձած արդի «Սոցիալիզմը»։

«Սոցիալիզմը» բառը նոր է, բայց նրա էութիւնը, գաղափարը ամենևին նոր չէ։ Նրա ծնողը յեղափոխութիւնն է կոչւում, որ իրենից առաջ եղած բռնութեան ցանած սերմերի առատ հունձն է։

Մարդկութեան պատմութիւնը անդադար յեղափոխութիւնների նշխարներ շատ ունի իր էջերում. բայց ոչ մի յեղափոխութիւն այնքան ընդարձակ, համաշխարհային գաղափարական և [illegible] չի եղել յառաջադիմութեան ճանապարհի վրայ, որքան քրիստոնէական կրօնի բերած յեղափոխութիւնը և քրիստոնէական սոցիալիզմը։

Համայնութիւնը քաղաքական, տնտես-քաղաքական, եգիպտական և հրէական ազգերի քաղաքակրթութիւնից և քաղաքական կեանքից գէթ բան չգիտէ ու չի տալիս մեզ։

Այդ ազգերի պատմութիւնից գիտենք թէ՝ հին ըմբռնումներով Աստուած կամ աստուածները ամենազօր բնաւոր տէրերն են, առանց նրանց կամքի, պատգամի և՝ որ առաւելն է, նրանց կամքի հակառակ ոչ մի գործ չի կատարւում և եթէ մարդիկ համարձակւում են նրանց ընդդէմ գնալ, չարաչար պատժւում են. պատժւում են սրով ու կայծակով, ջրհեղեղով ու կրակով, հուր ու սրով, ժանտախտով ու սովով։

Աստուածների ներկայացուցիչներն են կամ փոխ-արքաները մարդկանց մէջ, երկրի վրայ թագաւորները, որոնք հին ժամանակ և՛ կրօնապետներ էին և՛ կառավարողներ։ Սրանք էլ երկնքի թագաւորների օրինակով պատժելով էին կառավարում աշխարհը. թագաւորի կամ նրա առաջին օգնականների հրամանների հակառակ ընթացողը կամ այդ հրամանները քննադատողը մահուան էր դատապարտւում, այս աշխարհից բռնութեամբ չքացւում։

Նման ըմբռնումների հետևանքով յառաջ եկաւ տիրողների և վայելողների մի առանձնաշնորհեալ դասակարգ և ճնշուածների, աշխատաւորների, ստրուկ ժողովրդի մի բազմամարդ դասակարգ, որ հակառակ իր կամքին աշխատում էր մեր երկրաւոր աստուածների՝ տիրողների վայելքի համար։ Այս պարտականութիւնից դուրս ժողովուրդն ուրիշ բան չգիտէր և չէր էլ կարող իմանալ, որովհետև ինքնուրոյն կերպով մտածել, քննադատել, իմանալ՝ նրան արգելուած էր։

Եւ այդ ստրկական կրօնների տարուկ զաւակը շատ բնական էր համարում իր կացութիւնը ու հոգա ապրում կեանքի հետ։

Հին Արևելքի ըմբռնումներն անցան Հռոմ և Հռոմի կայսրները, որ աշխարհի անսահման ու անսանձ տէրերը դարձան, Ասորեստանի բռնակալների շինած կաղապարովը կազմակերպեցին իրենց իշխանութիւնը, միաժամանակ պաշտուելով որպէս աստուածներ։ Նրանց բռնութեան, մասսայական ու ամբոխական ճնշման տակ ստրկացան ազգեր, թշուառացան ժողովուրդները, որոնց քրտնախառն աշխատանքի արդիւնքը աշխարհի ամէն կողմից հոսում էր դէպի Հռոմ, տիրողների ապարանքները ճոխացնելու, վայելքի սեղանն առատացնելու։

II

Տակայն ժամանակի ընթացքում զարգացող մտքի և տեղ գտնող քրիստոնէական գաղափարների զօրութեան առջև հեղհեղուկ քանդուեց բռնութեան և սրի հաստատած քաղաքը։ Թուականը. արևելցիք հաւատում էին իրենց աստուածներին, թէ բռնադատը, թէ ստրկատէրը, ուստի և դրութիւնը բնական էր երևում։ Հասաւ հենց տիրողները դադարեցին իրենց աստուածներին հաւատալուց և խախտուեց հաւատքը ժողովրդի դէպի նոյն աստուածները։ Այս խախտուած հաւատքը անտանելի դարձրեց ժողովրդի կացութիւնը և անբնական։ Ստոյն առաջ մտքերի յեղափոխութիւն՝ ակունքում դէպ բուռն ու անձայն։ Տառապող ժողովուրդները այրող կարիք զգացին նոր Աստուծոյ, նոր կրօնի, նոր սիրոյ ու կարգի։

Հէնց այդ օրհասում լրացաւ մի ընդունակ ժողովրդի հանճարեղ մարգարէների դարերով յառաջնախադրուած ժամանակը. հրէական հանճարը վաղուց ի վեր զգացել էր թէ տիրող կազմակերպութիւններն անբնական են, բռնադատուած, ուստի և անմիջական մարդկութիւնը մի օր դուրս պիտի գայ բռնութեան ճիրաններից։ Մարգարէները նախատեսել էին, բայց քողարկուած կերպով էին արտայայտել ճշմարտութիւնը։

Եկաւ այդ ժամանակը. քաղաքականապէս, տնտեսապէս ու կրօնապէս ամենից շատ հալածուած հրէայ ժողովրդի մէջ [illegible] իբրև Աստուածորդին։ Նա [illegible] ամենաչքաւոր ժողովրդի զաւակն էր և եկաւ աղքատների, արհամարհուած կնոջ զաւակ։ Եւ այդ շատ բնական էր. նրան կեանքի և գործի առաջադրեալ էր [illegible] խեղճերին, [illegible], միշտ ու բոլորին մխիթարել և նա համր ժողովրդի բազմութեան զգացումների անվեհեր թարգմանը։ Նա եկաւ հին կարգերը քանդելու և նորը հաստատելու և նրա հոնգէս գալը յառաջ բերեց ամենամեծ յեղափոխութիւնը, որ աշխարհը տեսել է, ամենամեծ ու բարձր սոցիալիզմը, որի նման կատարեալը դեռ չկայ։

Կրօնական ըմբռնումներից էլ պէտք է բղխեր նոր աշխարհահայեացքը, նոր կենցաղը։

Եւ ահա նա «[illegible]» հին կրօնին, հին տաճարին, հին իշխանութեան, տալով իր ուսմունքը։

Աստուած ձեր իսկ սրտի խորհուրդն է, դուք էք Աստուծոյ տաճարը և Աստուածն է բնակւում այնտեղ. այդ տաճարը սուրբ պահեցէք։ Ձեր խղճմտանքը մաքուր, ձեր սիրտը չար հակումներից հեռու պահեցէք, յանցանքներով մի պղծէք Աստուծոյ տաճարը։ Ոչ ոք ձեր տէրը չէ, ձեր տէրն ու հայրը միայն Արարիչ Աստուածն է, որի որդիքն էք դուք և հաւասար եղբայրներ։ Մինչև այժմ ձեզ կառավարում էր օրէնքը, որ յանցանքի հետևանքով է առաջ եկել և անզօր է յանցանքը վերացնել կեանքից, որովհետև օրէնքը միայն պատժում է, բայց չի ուղղում. յանցագործ հոգին միշտ կարող է ծուռ ճանապարհով խուսափել պատժից։

Դուք պէտք է այժմ շնորհքով ապրէք, հոգու բարձր արժանաւորութեամբ. դուք պէտք է սիրէք իրար՝ գթաք խեղճին, [illegible]ուրի սուգը փարատեցէք, [illegible]էր լինեք, առանց սուր [illegible]նելու, որովհետև սուր հանողը սրով կընկնի։ Երկու բանակի ունեցողը մէկը չունեցողին պիտի տայ։ Մեղաւոր են ձեզ վերցնողները, չար հարուստները. Նրանք եթէ ուզում են արքայութիւն մտնել, պէտք է ձեզ ցաշէն իրենց հարստութիւնից յօգուտ աղքատների. Նրանք չափազանց գերի պիտի չդառնան նիւթին, մամոնային, որովհետև երջանկութիւնը նիւթի մէջը չէ. միայն նիւթը՝ հացը չէ, որով ապրում են մարդիկ, հոգեկան պահանջներ էլ կան՝ արդարութիւն, մաքրութիւն, չափաւորութիւն ամէն բանի մէջ, ճշմարտութիւն, բարութիւն և այլն, որոնց կարօտ է մարդը և որոնք հոգով դէպ՝ երջանիկ են դարձնում մարդուն և ճանապարհը՝ նրա խիղճը։ Աշխատաւորին չպէտք է զրկել, որովհետև ամենայն մշակ՝ աշխատաւոր արժանի է իր վարձին։ Դէպի ձեզ խիստ եղէք, դէպի ձեզ նմանը զիջող և ներողամիտ։ Միշտ զգաստացէք մի անէք, որ խաբուեծից չընկնէք. Մի կռուէք ձեր հոգին. հաւատացէք բարութեան, ճշմարտութեան, գեղեցկութեան և համոզուած եղէք, թէ ինչ որ բարի է, ճշմարիտ է, գեղեցիկ է, նա ձեզ կը փրկէ և երջանիկ կանէ։ Բայց ամենից աւելի սիրեցէք իրար. սիրոյ զգացմունքը փակում է յանցագործութեան բոլոր դռները։ Երբ մարդիկ փոխադարձ սիրով կապուած լինեն, էլ ոչ պատժող օրէնք կը լինի և ոչ ճնշող իշխանութեան կարիք։

Հեռու [illegible] չար հոգ ուսուցանելու ապականութիւնից, փառասիրութիւնից և Աստուծոյն կամ բարձր գաղափարները վարձութեան ենթարկելուց. այդ երկիրն են բղխում բոլոր յանցանքները, որոնք են այն չար սատանաները, որ մարդկանց փորձանքի մէջ են ձգում։

Ահա այս է Աւետարանի ուսման էական բովանդակութիւնը, որ միաժամանակ լաւագոյն համայնակեցութեան՝ սոցիալիզմի հիմքն է դառնում և ուղիղ դաստիարակութեան հիմունքները։

Այսպիսի բարձր մարդասիրական գաղափարները Մեծ Վարդապետից անմիջապէս յետոյ մարմնացան համայնակեցութեամբ — կոմմունայով. Երուսաղէմում կազմուեց այդ վարդապետութեան շուրջը կոմմունա. մեծ գաղափարին հաւատացողները իրենց ինչքն ու գոյքը մի տեղ կուտեցին, հաւասարապէս գործեցին. հաւասար աշխատում էին, հաւասար վայելում, հաւասար աղօթում։

Բայց Յիսուսի ուսմունքը, հաւատարութեան զօրքը իր հիմքերը նախապէս էր ժողովրդի մեծ զանգուածի թշուառներին, տիրող, ճնշող դասակարգերին. ուստի հզօրները դաշնակցեցան և ցրիւ տուին գաղափարական կոմմունան։ Ցիրուցան գաղափարներով կազմակերպուեց ու միայն քրիստոնէական եկեղեցին, որ կոչուած էր նոյն ուսմունքը տարածելու և պահելու։ Եկեղեցին առաջին պահերում կատարեց իր դերը իր կոչման արժանութեամբ. յետոյ աշխարհիկներին ենթարկուելով հեռացաւ կոչումից և դարձաւ տեղ-տեղ հալածող, չարամոլ, գաղափարականից թափուր՝ ձև, ծէս, արարողութիւն։ Եկեղեցին նոյն հրէական տաճարի կերպարանքն առաւ իր հոգևորների կազմակերպութեամբ, որոնց դէմ Յիսուսը բողոքեց և «[illegible]»։ Տեղ-տեղ էլ դարձաւ բռնաւորների դաշնակիցը և ժողովրդի չարագործներից մէկը։

Տակայն գաղափարի ապականումը՝ անհատների ձեռքով դեռ իրաւունք չի տալիս նսեմացնելու նոյն գաղափարի վսեմութիւնը։ Քրիստոնէութիւնը [illegible] ու կը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիֆլիս, 25 ապրիլի

ՎԵՐՋ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Մօտենում են Հայաստանի ընտրութիւնները. նախ՝ քաղաքային, զեմստուոյական և ապա՝ Հիմնադիր Ժողովինը: Ժամանակը կարճ է ու աննպաստ, իսկ գործը՝ ծայր աստիճանի լուրջ ու պատասխանատու:

Այստեղ հանդէս են գալու հայ իրականութեան մէջ գործող և հայ ժողովրդի վրայ յենուող տարբեր հոսանքներ ու կուսակցութիւններ և ամէն ջանք գործ են դնելու՝ իրենց իշխանութիւնն ու հեղինակութիւնը էլ աւելի ամրացնելու և բարձրացնելու հայ ազգի աչքում:

Եւ մեզ թւում է, որ այդ գործը կատարել կարող է միայն այն քաղաքական հոսանքը, այն քաղաքական կուսակցութիւնը, որը կը մօտենայ առաջադրուած բարդ ու կարևոր խնդրին ոչ միայն իր նեղ կուսակցական շահերի պաշտպանութեան տեսակէտից, այլ և ցոյց կը տայ ընդհանրութեան շահերի լիակատար ըմբռնում, որը հանդէս կը բերի շինարար աշխատանքներ կատարելու անվիճելի ընդունակութիւնը և որը, վերջապէս, կապացուցի, որ կանգնած է պետականութեան գաղափարի կիրառման հաստատուն և անսասան հողի վրայ:

Հայաստանը մինչև օրս եղել է մի «աշխարհագրական տերմին», հայ ժողովուրդը մինչև այսօր եղել է մի թափառական ազգ, որը չի ունեցել իր տեղն ու անկիւնը և չի կարողացել վարել իր հաստատուն քաղաքականութիւնը, որովհետև նրա «ղեկավարները» պետութիւն ասած բանը չեն տեսել, իշխանականութիւն ասած բանը չեն հասկացել և չեն իւրացրել:

Որտեղից պէտք է նրանք շնորհք ունենային պետական առողջ և իմաստուն քաղաքականութիւն վարելու:

Բայց այսօր դրութիւնը փոխուել է. Հայաստանը վերածնւում է. մեծ թէ փոքր, այդ դեռ յայտնի չէ և այդ չէ կարևորը, բայց նա հանդէս է գալիս արդէն որպէս մի պետութիւն, մի անկախ և ինքնավար ամբողջութիւն: Եւ հայ ժողովուրդն էլ այլ ևս չի մնալու աստանդական ու օտար հորիզոնների տակ թափառական մի ժողովուրդ:

Այսօր նրա առաջ կանգնած է նրա ազգային գաղափարների և ձգտումների իրագործման ժամը: Եւ այդ ժամին նա պարտաւոր է ցոյց տալ իր առողջ ու պետականօրէն խորհել-մտածելու յատկութիւնը, որին չեն կարողացել մեռցնել նրա գլխին իրենց աւանտիւրաները կազմակերպող ազգուրաց «սոցիալիստ» դաշնակցականները:

Հայ ժողովուրդը այժմ պիտի վերջնականապէս ըմբռնի այն պարզ ու հասարակ ճշմարտութիւնը, որ չեն կարող պետութիւն վերակազմել և վերաշինել, չեն կարող պետական առողջ քաղաքականութիւն վարել այն հոսանքները, որոնք մինչև այսօր հնարաւորութիւն չեն ունեցել ազատ ու անարգել կերպով զարգացնել իրենց պետական ունակութիւնները և պետական գործունէութիւն ցոյց տալ լայն մասշտաբներով բոլորի աչքի առաջ, բոլորի քննադատութեան ներքոյ:

Հայ ժողովրդի համար պիտի միանգամայն պարզ լինի, որ պետութիւն վերաշինել, ժողովուրդ ոտքի կանգնեցնել կարող են միայն այն քաղաքական հոսանքները, որոնք ըստ էութեան եւ ըստ գործնականի պետական են եւ կանգնած են առողջ, մի եւ ընդհանուր քաղաքական պլատֆորմի վրայ եւ որոնք իրենց ընդհանուր գաղափարներն ու քաղաքական ձգտումները մի գծով, մի պարզ եւ որոշակի ընթացքով են արտայայտում իրենց հայրենիքի եւ պետութեան բոլոր մասերում եւ բոլոր շրջաններում:

Այդ քաղաքականութեան տարրական ճշմարտութիւնից զուրկ է եղել «ղեկավար» Դաշնակցութեան կազմակերպութիւնը (նա, իրօք եղել է կազմակերպութիւն և ոչ թէ կուսակցութիւն), և ահա այդ է պատճառը, որ հայ ժողովրդի գլխին այդքան բազմաթիւ դժբաղդութիւններ է բերել իր անհեռատեսութեան և ոչ պետականութեան շնորհիւ: Այժմ հասել է ժամը, որ հայ ժողովուրդը հասկանայ իր ապագայ անելիքը և միացեալ ուժերով ու ջանքերով գալիք ընտրութիւնների ժամանակ յետ մղի իրենից այդ չարաբաստ հոսանքը և, վերջապէս, կանգնի իրական և պետական հողի վրայ:

Վերջ խմբապետական քաղաքականութեան:

Հայ միշտ նոյն անզուգական կենդանի գաղափարը մարդասիրութեան հողը վրան:

Թենիկ վարդապետ

(Վերջը միւս անգամ)

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ

«Երանի այն երիտասարդին, որի հայրենիքը թշուառ է»:

Համաշխարհային մղձաւանջն անցնում է: Դարևոր տառապանքների բովից անցած, մեծ պայքարի յաղթանակով պսակուած, սակայն վիրաւոր ու արնաքամ հայ ժողովուրդը հնարաւորութիւն է ստանում անօրինակելու իր բաղդը, ապրելու մարդավայել կեանքով: Անկասկած է, որ միայն այն օրգանիզմն է կենսունակ, որը կարողանում է ի պահանջել հարկին հանդէս բերել իր բոլոր կենսական կարողութիւնները, մանաւանդ երբ հրապարակի վրայ է դրւում նրա գոյութեան հարցը: Այսպիսի մի րոպէ է ապրում ներկայումս հայ ժողովուրդը: Հենց այժմ է, որ նա ի դէն պէտք է կոչէ իր բոլոր կենսունակ տարրերը գոյութեան պայքարի այս վերջին էտապն էլ անցնելու և «նոր, ազատ վիճակի» շրջանը թևակոխելու համար:

Դարերի ընթացքում բազմաթիւ տէրերի ծառայելով, գոյութեան պայքարի այս երկար ուղին անցնելով նա այլասերել, անզգայացրել է իր մարմնի կենսունակ մասերից շատերը: Հայ ինտելիգենցիան, հայ ժողովրդի ուղեղն ու միտքը, բաւ մեծ մասին անհարազատացել է, իր բնից կտրուել, կամ թոյլ կապերով է միայն կապուած նրան:

Հայ արդիւնաբերողը, որը հայ երկրի անկախութեան զարգացման գլխաւոր գործօնը պէտք է հանդիսանայ, իր կապիտալը գործադրել է և գործադրում է երկրից դուրս, ապարդիւն բանալով օտար արդիւնաբերութեան, որը հազիւ թէ մեծապէս շահագրգռուած լինի հենց տեղում գործարաններ հիմնել հում նիւթերը մշակելու համար, այլ, հակառակը, երկրի հում նիւթերը պէտք է արտահանէ և օտար երկրում մշակելով առանձնապատիկ գնով մեր երկիրը վերադարձնի, որով քաղաքական ստրկութիւնը պէտք է տնտեսականի փոխէ: Հայ գիւղացութիւնը, շնորհիւ մի կողմից իր տգիտութեան, միւս կողմից մեր կեանքում գործող քաղաքական կուսակցութիւնների սխալ ու անհեռատես գործունէութեան, կայծակի արագութեամբ փոփոխուող քաղաքական անցուդարձի ազդեցութեան տակ ջլատուած ու տարակուսած, անկարող է որոշ ուղի բռնել, ստեղծագործական կանոնաւոր ու հեռատեսական աշխատանքի ձեռնարկել իր աւերուած բոյնը վերաշինելու և ապագայ բարգաւաճութեան հիմնաքարը դնելու համար: Այսպիսով հայ ժողովրդի բունը, նրա կենսալից հոծ մարմինը անշարժ ու անտարբեր, նորոգ է կտրուած գլխից բաժանուած օձի պոչի նման խարխափում է առանց ճանապարհ տեսնելու իր առջև:

Թւում է, թէ դրութիւնը յուսահատական է: Եւ հայ ժողովուրդը դարերի պայքարի յաղթանակի համբերն «իր վահանի վրայ պէտք է տուն դառնայ» և ոչ վահանով: Սակայն մի՞թէ այդ է միակ ելքը: Հայ բանաստեղծները «փիւնիկ» են անուանում հայ ժողովրդին նմանեցնելով նրան իր մոխիրներից վերածնուող թռչունին: Չկա՞յ արդեօք յաւիտենականօրէն մնացող ու անմահ պահող այն կայծը հայ ժողովրդի օրգանիզմի մէջ, որն ընդունակ պէտք է լինի մոխիրների և աւերակների տակից վերածնել «Նոր Հայաստանը» նորածին հայ ժողովրդով: Այո, կայ: Հայ երիտասարդութիւնն է այդ, մանաւանդ հայ ուսանող երիտասարդութիւնը, որը ժառանգելով իր պապերի ու հայրերի տանջանքն ու պայքարող ոգին, նրանց աճիւնների տակից պէտք է կարողանայ նոր կեանքի հիմքը դնել, վերաշինութեան վիթխարի, բայց երախտաւոր աշխատանքը կատարել: Եւ նա, այդ ուսանողութիւնը իր առհաւատչեան ունի, որ սրբութեամբ և պատուով պէտք է կարողանայ իր վրայ դրած պարտականութիւնը կատարել:

Յիշեցէք համաշխարհային պատերազմի սկզբի օրերը, երբ աշխարհի բոլոր ծայրերից խումբ-խումբ եկած Կովկաս էին գալիս հայ ուսանողները ոգևորութեամբ իրենց կեանքը զոհելու հայրենիքի ազատութեան սուրբ գործի սեղանի առաջ: Մղձաւանջն անցնում է: Հայ ժողովուրդը պատուով դուրս գալով արեան պայքարից, նորից սպասում է իր նոր կեանքի կառուցողներին: «Զուլումի» և սուգի երկրում երիտասարդական աշխատանքի խինդը պէտք է հնչէ և լոյսի ու վայելչութեան, կեանքի ու բոյրի մէջ պարուրուած «փիւնիկ» Հայաստանը պէտք է յարութիւն առնի աշխատանքի ցնծութեան երգերով:

Դիմում ենք Ձեզ, բոլոր հայ ուսանողներ, հայրենիքի վերաշինման ընթացքին անտարբեր չմնալու, դէպի նրա լուսաւոր ապագան, համախմբուելով մեր հայրենիքի շինարարական գործօնների շուրջը, թէ՛ ուժերից ստեղծագործական աշխատանքին, մխիթարելով հայ գիւղացու լքուած հոգին, բանալով նրա աչքերը իր նոր կեանքի յատակագծուած մրցակցին տեսնելու և լի նոր յոյսերով դէպի վերելքի վերջին էտապն էլ անցնելու գաղափարի փոփոխուած իղձերին հասնելու համար:

Ուսանող

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՉԻՉԵՐԻՆԻ ՆՈՏԱՆ

Չիչերինը դիմել է Լլոյդ-Ջորջին մի նոտայով, որով պահանջում է, որ անգլիական զօրքերը ռուսական ոչ մի ֆրոնտում չմասնակցեն բոլշևիկների դէմ վարած կռիւներում:

(«Гудокъ»)

ՇԵՅԴԵՄԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Շեյդեմանը լրագրների աշխատակիցներին յայտարարել է, թէ սպարտակեանների նորից բռնկուող շարժումը յաջողութիւն չի կարող ունենալ. դա նրանց վերջին ճիգերն են, որից յետոյ շարժումը կը դատապարտուի անհետանալու: Այդ բանը երևում է նրանից, որ կառավարութեան կողմն է գտնւում հսկայական մեծամասնութիւնը և ամբողջ երկրի հասարակական կարծիքը համակրանքով է վերաբերւում դէպի նա:

«Գերմանիան, ասել է Շեյդեմանը, Ռուսաստան չէ և չէ կարելի թոյլ տալ, որպէսզի Գերմանիայի կառավարութիւնը իր ձեռքն առնի մի խմբակ, որ երկրի վստահութիւնը չէ վայելում»: (Ականջը կանչի մեր դաշնակցականների):

ԳԵՆԵՐԱԼ ԲՐԻԳՍԸ

Եկատերինոդար են հասել մեծ բրիտանական գեներալ Բրիգսն իր շտաբով, որ բաղկացած է Դաշնակից 60 սպաներից և մասնագէտ պաշտօնեաներից ու 150 անգլիական զինուորներից:

Գեներալ Բրիգսը նշանակուած է Ռուսաստանի հարաւում գործող զինուորական ուժերի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ա. Ի. Դենիկինի մօտ, որպէս Դաշնակից զինուորական միսսիայի պետ:

Այս միսսիայի տեղ հասնելուց յետոյ գեներալ Դենիկինի բանակի համար Նովոռոսիյսկի վրայով պիտի ստացուեն 250 հազար հոգու հագուստեղէն և զօրամթերք:

Գեներալ Բրիգսի հետ միասին Նովոռոսիյսկ նաւահանգիստն է ժամանել մի անգլիական փոխադրանաւ, որ բերել է մի քանի հազար [illegible], հրետանու համար 450 ջորիներ և զօրամթերք:

Գեներալ Բրիգսը խոստանում էր Դենիկինին և նրա զօրքին լիովին աջակցութիւն ցոյց տալ:

(«Гудокъ»)

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԾՈՒՆԱԳԻՐԸ

Ախտարաղում հրատարակուող «Гудокъ» թերթը հաղորդում է, թէ Ռուսաստանում բոլշևիկների դէմ գործող կառավարութիւնների ներկայացուցիչները, որոնք այժմ գտնւում են Փարիզում, խաղաղութեան կոնֆերանսին մի յուշագիր են ներկայացրել, որով նրանք յայտնում են, թէ ռուսական հարցի լուծման միակ միջոցն այն է, որ բոլոր նորակազմ պետութիւնների մէջ ճանաչուի status quo և Ռուսաստանը վերածնուի Սահմանադիր Ժողովի միջոցով, որ պէտք է Ռուսաստանում հաստատէ դաշնակցական կառավարութիւն և ճանաչէ մի քանի նահանգների անկախութիւնը:

«Ժուռնալ դը Դեբա» ողջունում է այդ յուշագիրը, նրանում առաջարկուած միջոցները համարելով ամենանպատակայարմարը ռուսական հարցը լուծելու համար:

Յուշագրի հեղինակներն առաջարկում են խաղաղութեան կոնֆերենցիային Ռուսաստանի առանձին մասերի հարցերը չըլուծել, բացի Լեհաստանի հարցից:

ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ «ՀՈՒՄՄԷԹ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՎՃԻՌԸ

«Հումմէթ» կուսակցութիւնն իր վերջին նիստում հետևեալ վճիռն է կայացրել.

1) Ռուսաստանում սկսուած մեծ յեղափոխութիւնը հետզհետէ տարածւում է աւելի նահանգներում ու տէրութիւններում և ստանում է համաշխարհային յեղափոխութեան կերպարանք, որի հետևանքն այն է, որ համաշխարհային պատերազմում կռուած են երկու ուժեր՝ յեղափոխութեան և իմպերիալիզմի ու կապիտալիզմի ուժը: Այս հանգամանքն կանգնեցնում է թուրքական դեմոկրատիայի հասարակութիւնը պայքարող համաշխարհային աշխատաւորութեան ու գիւղացութեան կողմն և նա իր բոլոր ուժերով պիտի պաշտպանէ յեղափոխութիւնը:

2) Կուսակցութիւնը պաշտպանելով Ադրբեջանի անկախութիւնը, որպէս յեղափոխական մի թանկագին նուաճում, պէտք է վճռական կռիւ մղէ ինչպէս ներքին, այնպէս էլ արտաքին թշնամիների յետադիմական հակա-յեղափոխական տարրերի դէմ և մասնաւորապէս Դենիկինի և յետադիմական զօրամասերի սպառնացող վտանգի դէմ, որ գալիս է սրով ու հրով ոչնչացնելու ինքնորոշուած ազգերի ազատութիւնը և խեղդելու յեղափոխութեան բոլոր նուաճումները:

3) Կուսակցութեան ժամանակաւոր կոմիտէին յանձնարարել, որ կազմակերպէ ժողովրդական գւարդիականների մի խումբ, որոնց ուղարկել Դաղստանի ճակատ յեղափոխութեան կարմիր դրօշակով:

4) Բողոք յայտնել Դաշնակիցների նուաճողական ձգտումների դէմ, որոնք աշխատում են մեր կեանքում գաղութային քաղաքականութիւն մտցնել:

100 ՄԻԼԻՈՆ ՆՈՐ ԲՈՆԵՐ

Վրաստանի Սահմանադիր Ժողովը իր ապրիլի 17-ի ժողովում ընդունեց այն օրինագիծը, որով թոյլ է տրւում կառավարութեանը բաց թողնել 100 միլիոն ռուբլու բոներ: Համապատասխան բոներ բաց կը թողնուեն նաև Ադրբեջանի և Հայաստանի կառավարութիւնների համար, եթէ այդ կառավարութիւնները կը կնքեն համապատասխան պայմանագիր: Բայց դրանից Ադրբեջանի կառավարութեանը կը տրուի 80 միլիոն ռուբլի, որպիսին նա չէ ստացել այս տարուայ յունուարին, եթէ նա կը ստորագրէ պայմանագիրը:

ԿԻԼԻԿԻԱՆ ԿՑՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Հայկական հարցի մասին լուրեր ստացուել են. Միացեալ և անկախ Հայաստանի ծրագիր ընդունուած է. Կիլիկիան [illegible] կողմէ, միայն Ալեքսանդրէտ [illegible], իսկ Հայաստանը Միջերկրականի վրայ նաւահանգիստ պիտի ունենայ, Մերսին, Ալմաւր-Թալբ և Բայաս:

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻ ԵՒ ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Կիլիկիոյ մէջ տևական հայութիւն չը կայ. Տարագրեալներուն մէկ մասը հոն կը հաստատուի:

Զօրքը և միլիսը կազմուած է հայերէ. ընդհանուր կառավարիչ Ֆրանսացի մըն է. Անգլիացիները առհասարակ շատ լաւ վերաբերում կը ցուցնեն և Պոժանդալեան հայերուն:

Ամերիկեան կոմիտէն արդէն ժամանած է Կիլիկիա և կը կազմակերպէ նպաստի գործը:

ՈՐԲԱՆՈՑՆԵՐ ԵՒ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Եգիպտոսի բարեգործականն ալ կարևոր դեր կը կատարէ Կիլիկիայում, հիմնելով որբանոցներ և հիւանդանոց: Բարեգործականի ներկայացուցիչներն են Միքայէլ Նաթանեան և Ռուբէն Հերեան (երկուքն ալ ռամկավար):

ՍՈՉԻԻ ՇՐՋԱՆԸ

«Грузія»-ն գրում է.— Ինչպէս մեզ հաղորդում են, Սոչիի շրջանի դրութիւնը հետզհետէ լաւանում է Վրաստանի համար: Համաձայն լուրերի, անգլիական հրամանատարութիւնը շարունակում է պնդել, որ Սոչիի շրջանը մաքրուի կամաւորական բանակից, որպիսին կռուի պատճառ է դարձել Վրաստանի և Կամաւորների մէջ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՕՐԱՀԱՒԱՔ

Թիֆլիսում Ռուսաստանից ստացուած տեղեկութիւնների համաձայն, Կուբանի հրամանատարութիւնը Դոնի հետ միասին, մօտ օրերս, մտադիր է Դոնի և Կուբանի շրջաններում ընդհանուր զօրահաւաք յայտարարել բոլոր ազգութիւնների հասակակիցներին: Հրամանատարութեան կարծիքով այդ զօրահաւաքը պէտք է տայ Կամաւորական բանակին մօտ 400 հազար մարդ, որովհետև Դոնը և Կուբանը ներկայումս լցուած են փախստականներով:

ԲԱԳՈՒԻ ՆՈՐ ԿԱԲԻՆԵՏԸ

Դիւանագիտական շրջաններում կարծում են, որ Բագուի նոր կաբինետի մայուն լինելը շատ կասկածաւոր է: Բագւում շարունակում է գործել քաղաքական մի խումբ, որը նորից առաջ է քաշում Խան-Խոյսկուն, որպէս պրեմիեր:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՎՐԱՑ ՀԵՌԱԳՐԱԿ. ԳՈՐԾ.)

Դոնի ճակատը

ԹԻՖԼԻՍ, 24 ապրիլի.— Անգլիական միսսիան յանձնեց գործակալութեանը հրատարակել հետևեալ պաշտօնական հաղորդագրութիւնը. Դոնի ճակատ. Ապրիլի 18-ին Դոնի կազակները յարձակւեցին Բեդնայի հիւսիսում գտնուած բոլշևիկեան բանակի վրայ: Յարձակումը պսակուեց մեծ յաջողութեամբ: Վերցրած են շատ գերիներ, այլ և 23 թնդանօթ և մի քանի գնդացիր: Սաստիկ կռիւ տեղի է ունենում Վելիկոկնյաժեսկից հիւսիս: Ճակատի միւս մասերում դրութիւնն անփոփոխ է:

· ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱՂՈՐԴ·

Խորհրդային իշխանութեան անկումը

Մինխենում խորհրդային իշխանութիւնն ընկաւ։ Այն զօրքերը, որոնք պէտք է կարմիր բանակի կազմի մէջ մտնէին, հրաժարուեցին մղուելու ինքնակոչ դիկտատուրների իշխանութեանը։ Հոֆմանի կառավարութիւնը վերականգնած է։ Ցայտարարուած է պատերազմական դրութիւն։

Պաշտպանողական կռիւ

ԲՈՒԴԱՊԵՇՏԻՑ հաղորդում են, որ վճռուած է պաշտպանողական կռիւ մղել չեխերի, ռումինացիների և հարաւային սլաւների դէմ։

Գերմանական պատգամաւորութիւնը

Երէկ, ժամը երեկոյեան, մարշալ Ֆոշը ստացաւ Գերմանիայից իր հեռագրի պատասխանը, որը նա ուղարկել էր կիրակի, Ջորջի խորհրդի կողմից, յայտնելով գերմանացիներին այն մասին, թէ ամեն մասն մարդկանց պատգամաւոր չի ընդունի և թէ ուղարկուածները պէտք է լիազօրուած լինեն ստորագրելու խաղաղութեան պայմանագիրը։ Գերմանական պատասխան-հեռագրի մէջ ասուած է, թէ գերմանական պատգամաւորութիւնը կազմուած կը լինի վեց բարձրաստիճան անձնաւորութիւններից, որոնց գլուխ կը լինի կանգնած գրաֆ Բրոկդորֆ Ռանցաուն։ Պատգամաւորութիւնը տեղ կը հասնի ոչ վաղ երկուշաբթի օրուանից։ Այդպիսով գերմանական ծրագիրները չիրագործուեցան, թէև ուշացրին։ Այժմ պատճառով պէտք է յետաձգել խաղաղութեան պայմանագրի գերմանացիներին յանձնումը, որը նշանակուած է շաբաթ։

Ենթադրում են այս լուրը կոնֆերանսի մի քանի ժողովներ կը գումարի, որպէսզի պատրաստութիւն տեսնեն նիստ շարունակելու դէմքերի համար։

Սիբիրիայի ճակատը

Սիբիրական բանակը, 100 վերստ առաջ-է շարժուել, ինչ սկսել է պատերազմական գործողութիւնները բոլշևիկների դէմ մարտ ամսից սկսած։ Նրա վերջին յաղթութիւնը Կամայի վրայ գտնուած Սարապուլի վերցնելն է, որտեղից բնակիչները յամառութեամբ պաշտպանուած էին վերջին ամիսներում։

Աշխարհիս ամենամեծ նաւը

Հաղորդում են, որ «Բիսմարկ» մեծ նաւը, որը աշխարհիս ամենամեծ նաւն է իր մեծութեամբ, ծով կիջեցնուի Բրուկլինում։ Նրա' ուժը հաւասար է 54,000 տոննի։ Նա զինուած կը լինի 12-15 գիւլամանաց թնդանօթներով։

Մեծ Բրիտանիայում

Փարիզից հաղորդում են, որ Բէլարիսա Թորիս Ռոբերտսոնը իր ճառում ասաց, թէ բրիտանական քաղաքականութիւնը երբեք չի հակուի դէպի բոլշևիզմը։ Մեծ Բրիտանիայում միայն անգամ չի կարող լինել յեղափոխութեան մասին։ Երկիրը բարենորոգումներ կը ստանայ, որոնք չեն խանգարի օրինական կարգը։ Յեղափոխութեան ընթացքը շատ դանդաղ կընթանայ, աստիճանաբար քայլեր անելով և ղեկավարուելով դեմոկրատական գաղափարներով, որովհետև պատերազմի ընթացքում նա հասունցել իր ուժը։

Գեներալ Վիլիամ Ռոբերտսոն

Գեներալ սէր Վիլիամ Ռոբերտսոնը հասաւ Ռեյն, որտեղից ընդունի Ռեյնի անգլիական բանակի հրամանատարութիւնը։

Ջորջի խորհուրդը

Ջորջի խորհուրդը մտադիր է Ֆիւմէ-Ջառա-ի հարցը քննութեան առնել երեքշաբթի։ Ֆիւմէի ժամանակաւորապէս յետաձգուած է։

Իտալիայի պատգամները կոնֆերանսին դրին շատ ծանր դրութեան մէջ, բայց յոյս կայ համաձայնութեան գալու։ Օրլանդոյի մեկնումը յետաձգուած է։ Պատգամաւորների նիստը յետաձգուած է մինչև մայիսի 8-ը։ Կարծում էին, որ իտալացիները ներկայ կը լինեն Ջորջի խորհրդի ցերեկուայ նիստին, բայց նրանք չեկան, որը նշան էր թէ նրանք իրենց սպառնալիքն են կատարում, սակայն այդ տեղի ունեցաւ Ջորջի խորհրդի ցանկութեամբ, որոնք որոշել էին առաջ հաշտութեան հարցը քննել և իտալացիներին առաջ մտածելու ժամանակ և առիթ տալ այդ պահանջի քննութեան։ Երեկոեան ժողովից յետոյ Կլեմանսօն, Օրլանդոն և Լլոյդ Ջորջը երկար ժամանակ քննում էին դրութիւնը։ Գլխաւոր կայանում յայտնի չէր իտալացիների քաղաքականութեան պատճառը։ Կարծիք կայ, որ նրանք վերջապէս համաձայնութիւն կը տան խելացի փաստերի առաջ թէև նրանից շատերը պնդում են հեռանալու վրայ։ Ինչպէս ասում են, Լլոյդ Ջորջը և Կլեմանսօն պաշտպանում են Վիլսոնին Ֆիւմէի հարցի մէջ։

Ամերիկան և Անգլիան

ԼՈՆԴՈՆԻՑ հաղորդում են, որ Լլոյդ Ջորջը համաձայնեց ընդունել ամերիկեան-իրլանդական պատգամաւորներին եկող շաբաթ։ Պրեմիերը ցանկանում է լսել նրանց և՝ տալ համապատասխան պատասխան, որ պէտք պարզուի այն տարաձայնութիւնը, որ տեղի ունի Անգլիայի և Ամերիկայի մէջ։ Նա պատրաստ էր ընդունել նրանց այս շաբաթ, բայց այդ հնարաւոր չէր անյետաձգելի գործերի պատճառով, որոնք պէտք է քննուէին կոնֆերանսում, ուստի խնդրեց պատգամաւորներին յետաձգել իրենց մեկնումը։ Միացեալ-Նահանգների անբաւարար դրութիւնը այժմ պարզւում է։ Լլոյդ-Ջորջը պատրաստ է ընդառաջ գնալ Իրլանդա-ամերիկական պատգամաւորութեանը և հնարաւորութիւն տալ պարզելու, մինչև իսկ քննելու նրա բոլոր հարցերը։ Բանակցութիւնները առաջ տարւում էին այնպէս, որ գործը միայն բարդացնում էին։ Այն անձը, որը տանում էր այդ գործը, կարող էր միայն վնաս հասցնել Անգլիայի և Ամերիկայի բարեկամական յարաբերութեանը։ Լլոյդ Ջորջը շուտով իսկը գտաւ այդ դրութեան, ցանկութիւն յայտնելով անձամբ ընդունել պատգամաւորութեանը և այդպիսով ապացուցել իր պատրաստակամութիւնը աշխատելու ամերիկացիների հետ միասին, Անգլիայի համար ամենաբարդ և դժուար հարցի վերաբերութեամբ։

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Նշանակումն. — Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան նախարարութիւնը դատական պալատի նախագահի պաշտօնավարութեան համար հրաւիրել է Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի անդամ իրաւաբան Յովհաննէս Սպենդիարեանին։

✦ **Հաստատուած օրինագիծ.** — Վրաց կառավարութիւնը հաստատել է ընտանիքի միակ կերակրողներին զօրակոչից և զինուորական ծառայութիւնից բոլորովին ազատելու օրինագիծը, որը ներկայացնելու է Սահմանադիր Ժողովին ի հաստատութիւն։

✦ **Գեն. Ղորղանեանի մեկնումը.** Հայոց հաշտութեան պատուիրակութեան անդամ գեն. Ղորղանեանը մեկնեց Փարիզ։

✦ **Գիտական դասընթացներ.** — Կովկասի բժշկական միութիւնը իր վերջին նիստերից մէկում որոշեց կազմակերպել բժշկական զանազան մասնագիտութիւններին վերաբերեալ պարբերական դասախօսութիւններ։ Այդ նպատակով ընտրուած յանձնաժողովը արդէն գործի է անցել. հրաւիրել է մի քանի յայտնի գիտնականներ ու բժիշկներ՝ դասախօսելու համար։ Հաւանական է, որ մայիսին սկսուեն դասընթացները։ Անդրկովկասեան համալսարանի բժշկական մասի շէնքում։ Տեղեկութիւններ կարելի է ստանալ միութեան քարտուղար բժ. Բոժովսկուց (Կիրոչնայա, № 15)։

✦ **Թիֆլիսի բաղանիքներ.** — Որպէսզի Թիֆլիսում ծծմբային ջերմուկաբուժական կայարան հիմնուի, երկրագործութեան մինիստրութիւնը Թիֆլիսի բոլոր ծծմբաջրային բաղանիքները աճուրդի է հանել կապալով տալու համար։ Աճուրդը սկսւում է բաղանիքների նախկին կապալառուների վճարած գնից։

✦ **Սահմանադիր ժողովի նիստը.** — Վրաստանի Սահմանադիր Ժողովի հերթական նիստը տեղի կունենայ այսօր։

✦ **Գեն. Տոմսոնի մեկնումը Բաթում.** — Գեներալ Տոմսոնը իր ադյուտանտով մեկնեց Բաթում։

✦ **Նաւահանգստի ծառայողների համար.** — Փոթիի զինուորական նաւահանգստի ծառայողներին բաւարարելու համար Վրաց կառավարութիւնը յատկացրել է 105,458 ռ.։

✦ **Յարգային պալատը լուծուած.** Վրաց կառավարութիւնը որոշել է կազմալուծել Անդրկովկասեան յարգային (пробирный) պալատը, իսկ նրա փոխարէն հիմնել յարգային բաժանմունք լեռնային վարչութեան կից։

✦ **Վրաստանի անկախութեան տօնը.** — Վրաստանի Սահմանադիր Ժողովին կից կազմուած յատուկ յանձնաժողովը՝ Նախագահութեամբ Սահմ. Ժողովի անդամ [illegible] և մասնակցութեամբ քաղաքային հիմնարկների, նկարիչների, գրականագէտների, դերասանների ու երաժշտագէտների ծրագիր մշակեց մայիսի 26-ին Վրաստանի անկախութեան տարեդարձի տօնը կատարելու համար։ Տօնը կրելու է ընդհանուր քաղաքացիական ազգային յեղափոխական բնոյթ։ Թիֆլիսում տօնի պատրաստութիւնները իր վրայ է առնում յանձնաժողովը, իսկ հանրապետ. Տեղական վայրերում պէտք է կազմակերպեն գիւղացիները, քաղաքային ինքնավարութիւնները, միջկուսակցական կազմակերպութիւններն ու հասարակական հիմնարկութիւնները՝ իրենց միջոցներով։ Այդ օրը Թիֆլիսի բոլոր թատրոններում տեղի կունենան համերգներ, ներկայացումներ, դասախօսութիւններ ու միտինգներ։ Մուտքը կը լինի կամ անվճար, կամ պակաս գնով։

✦ **Պողպատաձուլարան Թիֆլիսում.** Վրաց հանրապետութեան ֆինանսների և արդիւնաբերութեան կից կազմուել է մի յանձնաժողով, որը զբաղուելու է Թիֆլիսի զինապահեստում պողպատաձուլարան հիմնելու խնդրով։ Այդ նպատակի համար յանձնաժողովը 250,000 ռ. նախահաշիւ է ներկայացրել մինիստրութեանը։

✦ **Բաւարարուած պահանջ.** — Կենտրոնական հաշտարար բաժանմունքը գտաւ, որ «Тиф. Листокъ» թերթի աշխատակիցների պահանջը արդարացի է. ուստի նա հարկադրեց թերթի հրատարակիչ Կարլինսկուն և ընկերութեանը, որ վճարի աշխատակիցների ռոճիկը, մարտի 1-ից մինչև ապրիլի 18-ի հօնորարը և երկու շաբթուայ լիկւիդացիոնը։

✦ **Ռուսներին օգնելու համար.** — Ալէքսանդրապոլի ռուս ազգաբնակչութեան անտանելի ծանր դրութիւնը մեղմելու համար՝ Անդրկովկասի Ռուսաց Ազգային Խորհուրդը դիմել է ամերիկական գաղթականական կոմիտէին և խնդրել է օգնութիւն ցոյց տալ նրանց։

✦ **Աւանս.** — Քաղաքային վարչութիւնը որոշել է ի հաշիւ ապրիլ ամսուայ ռոճիկների՝ 200-ական ռուբլի տալ բոլոր քաղաքային ծառայողներին։

✦ **Գողութիւն.** — Վահան Ցաղովբեանը յայտնել է միլիցիային, որ ապրիլի 28-ի գիշերը իր բնակարանից անյայտ մարդիկ գողացել են 15,050 ռ. արժողութեամբ թանկարժէք իրեր և դրամ։

✦ **Դիակներ.** — Ապրիլի 28-ին միլիցիոներները Չէտարլինի փողոցում գտել են ոմն Սալօ Ցովսէփի դիակը և տարել են Միխայելեան հիւանդանոց։

— Նոյն օրը դաշտերին գտնուել է մի կնոջ դիակ և ուղարկուել նոյն հիւանդանոցը։

✦ **Պատկերահանդէս.** — Հիւսեանի գիմնազիայում բացուել է նկարչական պատկերահանդէս։ Պատկերահանդէսը բաց է լինելու մինչև ապրիլի 27-ը, ամեն օր ժամը 10-ից մինչև 2-ը։ Բեհբութեան փ. 25, Մուտքը ձրի է։

ԹԻՖԼԻՍԻ ԲՈՐՍԱՆ

25 ապրիլի

Բորսայում տրամադրութիւնը մնում է անփոփոխ։

Ռուսական «Նիկոլայեւսկի» 100 և 500 ռուբլիանոցները ծախւում էին 115 տոկոս և աւել յաւելումով, մանր կուպիւրները 45 տոկոսով։ Նորից թանգացել են «Կերենսկի» փողերը, որոնցից 1000 ռուբլիանոցները շրջանառութիւն ունէին 53 տոկոս յաւելումով, 250 ռուբլիանոցները 35 տոկոսով և մանրերը 15 տոկոս յաւելումով։

Ամուր է անգլիական վալիւտան. ֆունտ ստեռլինգներին վճարում են՝ բանկնոտներին 170 ռուբլի և չեկերին 150—160 ռուբլի։

Տաճկական ոսկի լիրաներ փոխւում են 270 ռուբլով։ Տոկոսաբեր արժէքթղթերից կարելի է անուանել ազատութեան փոխառութիւնը 73 ռ.։

Դիւիդենտ արժէքթղթերի պահանջը բաւական մեծ է. միայն առաջարկողները համարեա բացակայում են։ Նախկին գները հետեւեալներն են՝ Կովկասեան բանկի ակցիաները 580—600 ռ., Վաճառականական բանկի նոր ակցիաները 380—400 ռ., Անդրկովկասեան բանկինը 860 ռ. (հին) և 830 (նոր)։

Չեկերի փոխանակութեան համար պահանջւում են 20 տոկոս։

ԼՈՒՐԵՐ ԲԱԳՈՒԻՑ

Յունական զօրք. — Շուտով Բագու է մտնելու յունական զօրքի առաջապահ գունդը՝ բաղկացած 60 հոգուց, որն այժմ գտնւում է Լեւաքի կայարանում։

✦ **Ֆրանսիական զօրք.** — Բագու հասած զօրքը իջնելու է ծովային միութեան ակումբում, որը մինչև այդ ծառայում էր հիւանդանոցի փոխարէն։

✦ **Գեն. Միլնը.** — Կովկասի Դաշնակից զօրքերի անգլիական գեներալ Միլնը եկել է Բագու և շուտով կը մեկնի Թիֆլիս։

✦ **Թուղթը.** — Վերջերումս Բագու եկաւ մի յայտնի անգլիական առևտրական, որ միևնոյն ժամանակ անգլիական մի նշանաւոր թղթի գործարանի անդամ է, իր հետ Անգլիայից է բերել գործածական թղթի մի քանի նմուշներ և խոստացել է մինչև մայիսի վերջը մեծ չափով թուղթ բերել Բագու և Թիֆլիս։

ՈՒՂՂՈՒՄՆ

Վերջերս հայկական և մի քանի ռուսական և վրացական լրագիրներում տեղեկութիւն էր տպած, թէ բանաստեղծ Յ. Թումանեանը նշանակուած է Հայաստանի Կառավարութեան Խորհրդական։ Մեզ խնդրում են հաղորդել, որ այդ լուրը չի համապատասխանում իրականութեան։ Խորհրդական է նշանակուած ոչ թէ Յովհ. Թումանեանը, այլ իշխ. Միք. Թումանեանը։

ՆՈՒԽՈՒ ԵՒ ԱՐԵՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑ. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Միջոցներ է ձեռք առնում Վրաստանում գտնուող այդ գաւառների գաղթականների համար կազմակերպելու աշխատանք և կանոնաւորելու ու բարելաւելու նրանց պարենաւորման գործը, այլև ուրիշ նիւթական կարիքները։ Ուստի վարչութիւնը խնդրում է գաղթականներին անյապաղ ներկայացնել իրեն հետևեալ տեղեկութիւնները. 1. Գաղթականի անուն, հայրանուն, ազգանուն և տարիքը։ 2. Ո՞ր գիւղից է։ 3. Ընտանիքի անդամների անունները և տարիքը։ 4. Ի՞նչ արհեստ գիտէ կամ ի՞նչ աշխատանք կարող է կատարել բացի հողագործութիւնից։ 5. Այժմեան իրենց ճիշդ հասցէները։ 6. Ի՞նչ հիմնարկութիւն կամ կազմակերպութիւն է այժմ հոգում գաղթականի կարիքները։

Վարչութեան հասցէն. Вельяминовская, № 14, кв. 6. Ընդունելութիւնը ժամը 10—1։

Ծանօթ. Խնդրւում է այն հասարակական կազմակերպութիւններին և հաստատութիւններին, որոնք վարում են մեր գաւառների գաղթականների հոգացողութիւնը Վրաստանում, բարի լինեն յիշեալ տեղեկութիւնները հաւաքելու գործում աջակցելու անգրագէտներին տեղեկացնելով այս մասին։

Վարչութիւն

ՆԿԱՐԻՉ Ս. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ՆՈՐ ՊԱՏԿԵՐԸ

Զատկի կիրակի օրը, Հայ Արուեստագէտների Միութեան ցուցահանդէսում կայացաւ պատմական նիւթ ունեցող պատկերների մրցանակաբաշխութիւն։ Միութեան վարչութեան կողմից ընտրուած ժիւրին ուսումնասիրելու համար հրաւիրուած էին մի քանի պատմագէտներ, որոնք և յայտնեցին իրենց թէր և դէմ կարծիքները մրցանակաբաշխութեան ներկայացրած պատկերների մասին։ Ժիւրին առանձին քննութեան և ուշադրութեան առնելով պատկերներից մէկը, որ ունէր «Զրադաշտը Հայաստանում» անունը, արժանացրեց Ա. Ենգիբարեանի անուան մրցանակի։ Պատկերի հեղինակն է երիտասարդ նկարիչ Սարգիս Խաչատրեանը։ Պատկերը իր բոլոր քննադատելի կողմերով, ինչպէս վկայեցին ժիւրիի անդամները, ամենից աւելի յաջող, հայկականը մինչև այժմ կամ հրատարակուած հայ պատմական պատկերներից։ Քանի դեռ պատմական թանգարաններ չունենք, քանի որ Հին Հայաստանի ներքին կեանքի, հանդերձանքի և կահաւորութեան մասին դեռ նոր ուսումնասիրութիւններ չունենք։

Մրցանակաբաշխութեան ներկայացուած էր և մի ուրիշ պատկեր, «Արտաւազդ», որի հեղինակը անյայտ է։

«Ժողովրդի Ձայն»-ի խմբագրութիւնը շնորհակալութեամբ ընդունում է ձրի կամ վարձատրութեամբ Բագուի, Ռուսաստանի, Հիւսիսային Կովկասի և Արտասահմանի թերթեր։

ՍԱԼՄԱՍՏԻ ԱՒԵՐՈՒՄԸ

Ականատեսի նկարագրութիւնը

Սալմաստի աւերածութեան նախօրեակին

1917 թուի վերջերին Սալմաստի կեանքն ընթանում էր խաղաղ և նորմալ կերպով։ Պարսիկների յարաբերութիւնը դէպի հայերն ու ասորիները շատ բարեկամական էր և այդ երեք ազգութիւնների մէջ ոչ մի թշնամական երևոյթ գոյութիւն չունէր։

Այս հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ ռուսական յաղթական զօրքը դեռ ևս Պարսկաստանումն էր, նրա ազդեցութիւնը շատ մեծ էր պարսիկ կառավարութեան և ժողովրդի վրայ, նոյնիսկ Սալմաստում և առհասարակ Ատրպատականում ադմինիստրացիան գտնւում էր ռուսների ձեռքում։

Շնորհիւ ռուսների ներկայութեան կար ճանապարհների ապահովութիւն, երկաթուղային երթևեկութիւն, աւազակաբարոյ տարրերը զսպուած էին, այնպէս որ մարդկային կեանքը դեռ ևս իր արժէքն ունէր։

Այս շրջանում Սալմաստն իրենից ներկայացնում էր մի փոքրիկ հանրապետութիւն, որ բաժանուած էր երեք կանտոնների՝ հայկական, թուրքական և ասորական, իւրաքանչիւր կանտոնն ունէր իր առանձին ներքին ինքնավարութիւնը, և միմիայն արտաքին կարգի նշանաւոր հարցերում դիմում էր Դիլմանի դատաւորին կամ ռուսական իշխանութեան ներկայացուցիչներին։

Հայերի ներքին կեանքի ղեկավարը հանդիսանում էր տեղական Դաշնակցութիւնը յանձին Սամսոնեան Թաղէոսի [illegible] Սալմաստ (կարծեմ [illegible] է և [illegible] երկրորդ) և երկար տարիներ այնտեղ մնալով որպէս Դաշնակցութեան ներկայացուցիչ, բաւական բարեկեցիկ կեանք էր ստեղծել իր համար։

Թուրքական կեանքի ղեկավարը հանդիսանում էր նրանց սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը, իսկ ասորիներինը՝ նրանց հոգևոր և աշխարհական պետ Մար-Շիմոնը։

Բացի այդ երեք ազգութիւններից Սալմաստի լեռնային մասում, որ կոչւում է Սոմայի և Ճարա, ապրում էին քրդական նոմադ ցեղեր, որոնց մէջ նշանաւոր է Աբդօի ցեղը իր հռչակաւոր ցեղապետ Սմկոյով, որ այնքան մեծ դեր խաղաց ներկայ պատերազմական գործողութիւնների ժամանակ Պարսկաստանում։

Սալմաստի հայերը պարապում էին երկրագործութեամբ և մասամբ վաճառականութեամբ։ Տարիներից ի վեր սրանց մէջ ամուր բոյն էր հիւսել Դաշնակցութիւնը։ Ինտելիգենցիայի բացակայութեան պատճառով Դաշնակցութեան ղեկավարները ժողովրդի ստորին խաւերից էին և, ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ օգտւում էին «մաուզերիստներից»։

1917 թուի ներգաղթից յետոյ Սալմաստում աւազակութիւնը, թալանը, սպանութիւնը և սրանց նման սխրագործութիւնները սկսեցին բարգաւաճել։ Որովհետև դրանց հեղինակները ժողովրդի մէջ ահ ու սարսափ էին տարածում և ժողովուրդն ակամայ դրանց հնազանդում էր, ուստի Դաշնակցութիւնը կամենալով այդ հեղինակութիւնն իրեն օգտին ծառայեցնել, նրանց ընտրեց իբր իր ենթակոմիտէներ, միանգամայն արդարացնելով նրանց ամբողջ գործունէութիւնը և միջնադարեան կաթոլիկ կղերի նման նրանց անցեալ, ներկայ և ապագայ յանցանքները ներելով։

Այս պարոնները թալանում էին ոչ միայն հայերին, այլ և թուրքերին, քրդերին և բոլոր ազգերին։

Որպէսզի զրպարտողի և զրախօսի դեր ստանձնած չլինեմ, ասածներս հաստատեմ փաստերով։

1917 թուի վերջին Մ. գիւղի դաշնակցական ենթակոմիտէն լսեց, որ քրդերը թուրքական գիւղից թալան են տանում։ Իսկոյն մի քանի տասնեակ հոգուց բաղկացած մի զինուած խումբ ուղարկուեց նրանց առաջը կտրելու և թալանը խլելու համար։ Մի ամբողջ օր քրդերի հետ կռուելուց յետոյ թալանը խլեցին և բերեցին գիւղը։ Այս խմբի ղեկավարը դաշնակցական ենթակոմիտէն էր Զ. Վ.։

Թալանը գիւղը բերելուց յետոյ հետեւեալ օրը Ղալասարից, Հաֆթուանից և միւս գիւղերից ժողովուեցին Դաշնակցութեան ներկայացուցիչները յաղթութիւնը տօնելու համար։ Ամբողջ օրը կերան, խմեցին, վերցրեցին իրենց բաժինը և փառաբանելով «աշխարհի տէր Դաշնակցութիւն» ու նրա «պանծալի քաջերին», վերադարձան իրենց տեղերը։ Իսկ թալանի հերոսները միւս օրն և եթ թալանը ծախեցին ժողովրդին։

Դեկտեմբերի 24-ին մի քանի սոմայեցի քրդեր վերադառնում էին իրենց գիւղը՝ տանելով երեք իշաբեռ պաղար։ Ճանապարհին նրանց պատահում է յիշեալ աւազակ ենթակոմիտէն և համոզում է, որ փոխանակ շրջակի երկար ճանապարհով գնալու, անցնեն հայ գիւղերի միջից կարճ ճանապարհով, նրանց ազնիւ խօսք տալով, որ ոչ մի վտանգ չի սպառնալու։ Քրդերը, վստահացած նրա ազնիւ խօսքին, անցնում են հայ գիւղերով, սակայն աւազակը նրանց դուրս բերելով հայ գիւղերի սահմանից սպանում է այդ ողորմելի արարածներին, որոնք այնքան աղքատ են եղած, որ պաղարն առել էին հացի տեղ ուտելու համար։

Պարսիկ կառավարութիւնն այս ամենի մասին լաւ տեղեկութիւն ունէր, սակայն ոյժ չունէր սանձ դնելու «սոցիալ-աւազակների» եռանդին, ուստի լռում էր։

Այսպիսի դէպքեր շատ շատ են և բոլորն էլ անպատիժ են մնացել, որովհետև սրբագործուած են եղել «աշխարհի տէր Դաշնակցութիւնից»:

Շնորհիւ սոցիալիստական կուսակցութեան այդ «պանծալի քաջերի», ովք Սալմաստը դարձել էր դաշնակցական, և ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ ովքեր հակադաշնակցական էին, ենթարկւում էին հալածանքի, աքսորի և նոյն իսկ արտաքսւում էին Սալմաստից, որպէսզի չլինի թէ ժողովրդի աչքերը բաց անեն, ցոյց տան «պանծալի քաջերի» վնասակար գործունէութիւնը և խորտակեն «աշխարհի տէր Դաշնակցութեան» հմայքը:

Յիշեալ հերոսների ամենքն առաջ գնացին աւազակութեան մէջ, որ մինչև անգամ քրդերին գերազանցեցին: Թուրքն ի բնէ աւազակային հակումներով նախամարդ այդ «սոցիալիստ-յեղափոխական» աւազակների առաջ և նա ոչ միայն չէր կարողանում նրանց հետ մրցել, այլ անկարող էր հանդիսանում իրեն կեանքն ու գոյքը նրանցից պաշտպանել:

Հռչակաւոր աւազակապետ Սեյկոն միանգամայն չւարած մնաց սրանց դիմացը և 1917 թւի օգոստոսին դիմեց Դիլմանի ռուսական գործադիր յանձնաժողովին յիշեալ քաջերին սանձահարելու համար: Գործադիր յանձնաժողովը քննարկում է նրանցից 11 հոգու, գլխաթափ է անում, սակայն շնորհիւ Սամսոն-Խանի և այլոց միջնորդութեան ազատւում են՝ իրենց սխրագործութիւնները նոր եռանդով շարունակելու համար:

Հրանտ Սամսոնեան

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ախալքալաքի հայրենակցութեան մէջ*)

—

5) Եկեղեցապատկան գոյքի մասին.

Ախալքալաքի գաւառի եկեղեցիները փակ են: Գաւառում շատ քիչ քահանաներ կան: Ժողովրդի կրօնական պահանջները մեծ մասամբ չեն բաւարարւում, և այս հանգամանքը մի աւելորդ ցաւ է պատճառում տանջուած մարդկանց: Նոյնիսկ մեռելները յաճախ թաղւում են առանց ժողովրդի համար արժէք ունեցող կրօնական ծէսի:

Ժողովրդի կրօնական պահանջների բաւարարութիւն տալու համար խնդրւում է Վիրահայ Առաջնորդին և Թիֆլիսի թեմի առաջնորդին միասին միջոցներ ձեռք առնել գաւառ ուղարկել քահանաներին: Որովհետև ինքը ժողովուրդը այժմ նիւթական հնարաւորութիւն չունի իր միջոցներով քահանաներին պահելու, ուստի խնդրել է քահանաներին մինչև ժողովրդի տնտեսապէս ոտքի կանգնելը որոշ վարձատրութիւն նշանակել, եթէ գտնւեն միջոցներ:

Սակայն՝ քահանաներին պէտք է ուղարկել գաւառ մանաւանդ մի այլ նպատակով: Եկեղեցապատկան գոյքը և մանաւանդ հնագիտական արժէք ներկայացնող եկեղեցական իրերը հին ձեռագրեր, խաչեր և այլ սրբազան անօթներ,—կորսուած են մասամբ: Քահանաներին է յայտնի, թէ իրենց եկեղեցիները ինչ են ունեցել:

Պէտք է նրանցից հաշիւ պահանջել և նրանց վրայ պատասխանատւութիւն դնել, որ կորստից փրկեն, ինչ կարելի է ազատել:

6) Ներկայացուցիչ ուղարկելու հարցը.

Հայրենակցութիւնը յարուցել է և շատ ուրիշ հարցեր, ինչպիսին է գաւառի բնակչութեան թուի և կարիքների մասին տեղեկութիւններ հաւաքելու, ծառայողներ նշանակելու գործում մասնակցութիւն ունենալու և այլ խնդիրներ: Կայ, սակայն, մի հարց, որին Հայրենակցութիւնը բացառիկ նշանակութիւն է տալիս:

Այդ՝ գաւառում անկախ գաղթականական գործերի լիազօրից մի առանձին ներկայացուցիչ ունենալու խնդիրն է: Այդ հարցը Հայրենակցութեան ներկայացուցիչները յարուցել են դեռ ես դեկտեմբերից սկսած:

Ներկայացուցչի նպատակը պէտք է լինի տեղում առնել կալուածական ինքնորոշման օրգան,—Հայկական կոմիտէ կամ տեղական ազգային կոմիտէ, կարգաւորել գաղթական խնդիրը, պաշտպանել հայ ժողովրդին պատկանող հասարակական գոյքը, միջնորդ լինել ժողովրդի և տեղական վարչութեան միջև և այլն: Այդ ներկայացուցիչը պէտք է գնայ Վիրահայ Առաջ. Խորհրդի կողմից: Խորհուրդը դեռ չի տուել իր համաձայնութիւնը, թէև, ըստ երևոյթին, համակրանքով է վերաբերւում այդ առաջարկին: Վարչութիւնը և ընդ. ժողովի ներկայացուցիչները իրենց կողմից թեկնածու են առաջարկել այդ գործի համար պ. Արամ Տէր-Գրիգորեանին:

7) Բնակչութեան թիւը.—Ախալքալաքի գաւառում գաղթից առաջ եղել է կլոր թւով 80,000 հայ, որ կազմում էր ամբողջ բնակչութեան 76,5 տոկոսը: Վրացիների թիւը գաւառում եղել է մօտ 10,000 հոգի, դուխաբորներինը և մահմեդականներինը 8000-ական հոգի:

Հայերից չգաղթեցին առանձին գիւղեր յետոյ մօտ 10,000 հայ կաթոլիկներ, դուխաբորները և մահմեդականները: Այսպիսով գաղթեցին մօտ 80,000 հոգի հայեր և 10,000 հ. վրացիներ: Հայրենակցութիւնը իր դիմումների մէջ ենթադրաբար միշտ յայտնում էր, որ 80,000 հայերից գաւառ են վերադարձել մօտ 40,000 հոգի:

Ինչպէս յայտնեց պ. Ա. Տէր-Գրիգորեանց՝ Ախալքալաքի գաղթականական կոմիտէն ցուցակագրել է վերադարձող հայերին և ստացել է կլոր թւով նոյն թիւը, 40,000 հոգի:

Կարծւում է, որ 5 հազար հոգի էլ դրսում կը լինեն: Այսպիսով 80,000 հոգուց կենդանի են մնացել մօտ 45,000 հոգի, մնացած 35,000 ոչնչացել են... Այդ թւերը թերևս անճշտութիւն պարունակում են, բայց ոչ էական: 10,000 վրացիներից մնացած կը լինեն մօտաւորապէս 7 հազար հոգի.

Այսպիսով գաւառի բնակչութեան շատ հաւանական կազմը ներկայումս այսպէս է.

Հայերի թիւը չգաղթած հայ կաթոլիկների (10,000 հոգի) հետ միասին կազմում է 55,000 հ., մահմեդականներ, նոյնպէս որոշ չափով նուազած 7,000 հ., դուխաբորներ 8,000 հ., վրացիներ 7,000 հ., ընդամէնը 77,000 հոգի:

Այսպիսով հայերը կազմում են ամբողջ բնակչութեան 65 տոկոսից անց: Եթէ տրւած օգնութիւն չլինի ի հարկէ, մօտ ամիսները այդ տոկոսը շատ կիջնի:

Ցարիզմի ժամանակ գաւառ էին եկել մօտ 10,000 հ. զինւոր մահմեդականներ: Նրանք այժմ հեռացել են գաւառից: Հայ որբերի թիւը Ախալքալաքի տեղական կոմիտէն հաշւում է մօտ 3000 հոգի, այսինքն էլի այնքան, որքան ենթադրաբար միշտ իր դրութիւնների մէջ հաշւել է հայրենակցութիւնը:

8) Երկու խօսք էլ հայրենակցութեան մասին. Հայրենակցութիւնը կատարել է և կատարում է իր ույժերից բարձր գործ: Վարչութեան անդամներից մանաւանդ ոմանք անգին ժամանակ են կորցրել գաղթականութեան համար աշխատելու վրայ:

Չնայած որան՝ շատ գործեր մնում են չկատարւած, որովհետև մարդիկ և միջոցներ չկան: Ախալքալաքի տեղական գաղութը վարչական ծախսերի համար տուել է մօտ 9 ամիս առաջ միայն մօտ 4000 ռ.:

Վաղուց է վարչութիւնը այն դրութեան մէջ, որ նոյնիսկ գրասենեակային պարագաները գնում են վարչութեան անդամները իրենց միջոցներով: Եթէ վարչութիւնը միջոցներ ունենար՝ նա կունենար և պատրաստ էր ունենալ վարձատրութիւն ստացող մարդիկ, որոնք բացառապէս կը զբաղւէին նրա գործերով:

Ուրիշ ժամանակ աւելի հանգամանօրէն կ'խօսենք, բայց այժմ պէտք է ասենք, որ եթէ նիւթական միջոցներ լինէին՝ հնարաւոր կը լինէր ժողովուրդը ազատել շատ աղէտներից և փրկել հազարաւոր կեանքեր: Եթէ միջոցներ լինէին՝ վարչութեան ներկայացուցիչները շարունակ կը լինէին Թալգայում, Բաքուրիանում, այժմ Ախալքալաքում, կուսումնասիրէին ժողովրդի կարիքները, կ'հսկէին նրա համար բաց թողնւած միջոցների գործադրութեան վրայ, կը հոգային որբերի վիճակին, ներկայացուցիչներ կ'ուղարկէին Երևան, Պոլիս, Հիւսիսային Կովկաս, ուր կան բաւականաչափ ախալքալաքցիներ, անգլիացիներից լիազօրւած թղթեր կը կազմէին և այլն և այլն: Կարճ՝ միջոցներ լինելու դէպքում կատարւէր մի [illegible], որի միջոցով գրաւելով ամենաքաջարի մարդկանց, հայրենակցութիւնը կարող կը լինէր իր ժողովրդի համար այնպէս չվշտանալ, ինչպէս աշխատում է այժմ...

Միջոցների բացակայութեան գլխաւոր պատճառը տեղական գաղութի անտարբերութիւնն է: Թիֆլիսի ախալքալաքցիք չեն հետաքրքրւում վարչութեան դրութեամբ և նոյնիսկ չեն յաճախում ընդհանուր ժողովներին, երևի, վախենալով այն հանգամանքից, թէ, գուցէ, այդ ժողովներին յաճախող մերկ և սոված գաղթականութիւնը իրենց անհանգստացնէ իր կարիքով...

Վարչութիւնը, և այդ անտարբերութեան և լքւածութեան և այլ, այսպէս ոչ յիշատակելի պատճառներով մօտ օրերս, երևի, կը հրաժարւի:

Գ. Արևեան

---

*) Տես «Ժող. Ձայն» № 83.

ՕԳՆԵՆՔ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻՆ

Անցեալ ամիսներին համարեա միաժամանակ բացւեցին երկու պատկերահանդէս. մէկը «Կովկասեան Նկարչական Խրախուսման Ընկերութեան», Երևանեան տանը, միւսը «Հայ Նկարչաքանդակագործների Միութեան» Թիֆլիսի կրուժոկում.

Երկու ցուցահանդէսում էլ կան բաւականին քանակութեամբ կատարելագործւած գործեր, ինչպէս Գ. Բաշինջաղեանի, Սուրէնեանցի, Մխիթարեանի, Քոջոյեանի, Եղ. Թադէոսեանի, Թարլէմէզեանի, Ս. Երկոյեանի, Ս. Աղաջանեանի և այլոց գործեր, որոնցից ոմանք մեզ տեսնւում էք՝ հազիւ հանդիպաւում էք, որ մեր կեանքի մէջ ևս ընկել է գեղարուեստի այդ հառաջադէմ լուսաւորելու մեր մտքերը, զարգացնելու մեր ճաշակը, կրթելու մեր զգացմունքները:

Բայց երբ իրազեկւէք լինում թէ ինչքան են աւելի այցելում ցուցահանդէսները, ինչքան են վաճառւում ցուցադրւած գործերից և ինչ հանգամանքներում են ապրում իրենց նկարիչներն ու քանդակագործները՝ ընկնում էք դառն խորհրդածութիւնների մէջ:

Պատկերահանդէս յաճախողների ստւար մասը բնակչութեան հասարակութիւնն է, որ այսօր ոչ միայն նկար առնելու, այլ և իր համեստ տուրքը հայթայթելու հնարաւորութիւնից զուրկ է. չեն յաճախում տարաբախտաբար մեր հարուստ դասակարգը և այն մարդիկ, որոնք բախտի բերմունքով ահագին գումարներ են ձեռք բերել այս պատերազմին:

Այդ մարդիկը գնում են 1—3 ժամով իրենց ընտանիքներով ու զաւակներով յաճախել պատկերահանդէսները, ձեռք բերել մի երկու գործ. չէ որ նկար ձեռք բերելու նպատակը միմիայն այն գնելը չէ, այլ և գլխաւոր իր սենեակը զարդարելը, դաստիարակել ճաշակ և զգացմունքի տեւականապէս: Այդ բանը մենք ցուցահանդէսում այսօր չենք նկատում, կամ քիչ ենք նկատում. և ինչ է լինում դրա հետևանքը. այն, որ մենք այսօր մեր աչքով տեսնում ենք, մեր ականջով լսում.—ահա ձեզ մի մօտ 40 տարեկան բնածին տաղանդ, ինքը բնիկ հայաստանցի, հագել է հասարակ հին շինել, պատառոտւած կօշիկներով, դրել է ցուցահանդէսում հասարակ ու մաքրած հասարակ թղթի վրայ նկարւած գործեր, որոնք նկարչի տաղանդաւորութիւնն են ցոյց տալիս. սակայն, աւաղ, չէ եղել մինչ օրս մի մարդ, որ նրան հնար տար կատարելագործւելու և նա այդպէս պատրաստւելու ընդարձակացնէր իր տաղանդը: Ահա ձեզ մի երկարամազ նկարիչ. ունի հրաշալի պէյզաժներ, հրաշալի պատկերներ, մինչև իսկ յատուկ հին հոլանդական նկարիչների վրձինն. սակայն թախիծով նայում է, որ գեղարուեստը գնահատող չկայ, իր գործերը առնող չկայ. նա խորը թախիծով ասում է. «Է՜, այլևս բաւական է տանջւեմ. Կովկասում գեղարուեստն ինձ չի պահի. երբ վերադառնամ հայրենիք, այնտեղ պարապելու եմ առևտրով. ես քաղցած մնացի, որդիքս էլ քաղցած չմնան»: Ահա ձեզ մի շատ շնորհալի արձանագործ. ունի դրած ցուցահանդէսում շատ նշանաւոր-խօսուն գործեր. տարիներ ապրել է, որ մէկ որ ցուցադրւին այդ արձանները, ծախւեն, միջոց տան իրեն 1—2 տարի ապրելու, որպէսզի նորից նոր ստեղծագործէ ուրիշ բաներ, սակայն հասարակութիւնը չի մտահոգւում առնելու. և նա վշտացած ասում է. «Մեր հասարակութիւնը տակաւին պատրաստ չէ քանդակագործութիւնը հասկանալու, ամբողջովին նուիրւել եմ նրան, այս թանգութեան օրերին գոյութիւնս պահպանելու համար ծախել եմ ամեն ինչ, սակայն ապարդիւն...»

Եւ ինչ է լինելու այս հետևանքը. այն, որ նկարիչների ու քանդակագործների մի մասը, թերևս մեծ մասը, թողնի իր մասնագիտական գործը, զբաղւի կողմնակի բանով, օրինակ չի հայթայթէ իր օրական պարէնը. ուրիշ խօսքով ասած՝ կամ բոլորովին թողնի իր տաղանդը կամ դառնայ դիլետանտ, որից տուժելու է միայն և միմիայն գեղարուեստը. իսկ գեղարուեստի ընկնելը մի ազգի մէջ նշանակում է նրա ճաշակի չզարգանալը, նրա զգացմունքի չկրթուելը...

Այսօր մեր գրողների համարեա 90 տոկոսը, թողած իրենց գրիչը, կողմնակի գործով է զբաղւում և երեխաները հացի իրենց յղացած [illegible] ապահովելու համար. մեր արտիստների մեծագոյն մասը, թողած իրենց պրոֆեսիան պարապւում են ուրիշ գործով, և դրա հետևանքով լռել է գրականութիւնը, չունենք փորձւած արտիստներ. այդ վտանգին կենթարկւի և նկարչութիւնը, եթէ նրան չհասնենք օգնութեան:

Արդեօք այս երևոյթները հանդուրժելի են մեզ համար, ներելի մի ժողովրդի համար, որ վերածնութեան նախօրեակին է: Ոչ միայն ներելի ու հանդուրժելի չէ, այլ և խիստ ցաւալի:

Ինչպէս վաճառականութեան առաջխաղացումը ապրանքի սպառումն է, այնպէս գեղարուեստի առաջխաղացումը նրա գործերի տարածումն է գնումը — ժողովրդի մէջ, որով հնարաւորութիւն է տրւում տաղանդաւոր նկարչին, քանդակագործին, գրողին և այլն նիւթապէս ապահովւելու և հանգիստ, առանց կողմնակի պարապմունքների, իր տաղանդը մշակելու, զարգացնելու:

Ժամանակ է, որ մենք մտածենք այդ մասին, ժամանակ է գիտակցենք, որ մի ազգի կենսունակութիւնն ու զարգացման միջոցներից մէկն էլ գեղարուեստն է. ժամանակ է, որ մտածենք մեր նոր սերնդի կրթութեան ու ճաշակի զարգացման մասին. ժամանակ է դուրս գալու ասիական քաղքենիութիւնից և տևապէս եւրոպացի դառնալու. ժամանակ է ապահովենք գեղարուեստական գործերը, ժամանակ է վերջապէս, որ օգնենք գեղարուեստին:

Եղիշ. Մալխասեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏ.

ՕՊԵՐԱ

—

Չգիտեմ՝ [illegible] հասարակութեան հետևանքն է, թէ նրա բաղդը, թէ վաղեմի ժողովրդական պահանջը («panem et circenses»), բայց օպերային թատրոնը գրեթէ ամենայն երեկոյ լիքն է լինում, ուստի և օպերային ներկայացումները երևի շարունակւելու են մինչև մայիսի 20-ը: Վերջին ներկայացումներում մասնակցում է Պետրոգրադի «Երաժշտական դրամայի» դերասանուհի տ. Դաւիդովան: Ցաւով լսել տ. Դաւիդովային Սեն-Սանսի «Սամսոն ու Դալիլա» օպերայում. թէպէտ տ. Դաւիդովայի ձայնը թոյլ է Դալիլայի խիստ կրքերը արտայայտելու համար, բայց այդ ձայնը այնքան մեղմ է և դուրեկան, իսկ դերասանուհու երգելու եղանակը այնքան երաժշտական և գեղեցիկ, որ ստացւած ընդհանուր տպաւորութիւնը շատ լաւ էր տ. Դաւիդովայի համար:

Պէտք է մասնանշենք նաև դերասանուհու մտածւած խաղը, որն աշխուժացնում է նրա երգելու լաւ տպաւորութիւնը: Ողջունում ենք տ. Դաւիդովայի հրաւիրելը: Սամսոնի դերը կատարում էր պ. Կանշինը, որ յոգնած էր վերջին երկու գործողութիւններում, իսկ առաջինում չափազանցնում էր ձայնի ույժը: Ծանր էին երգում նաև պ. Պոլիտաևը և Եսերկինը: Թոյլ էին խմբերը, որոնք ժամանակ առ ժամանակ կեղծում էին: Նւագախումբը ղեկավարւում էր իր սովորական հմտութեամբ պ. Ցագերմանից:

D-molo

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Հայկական Դրամ. Ընկերակցութեան

—

Կարդալով «Ժողովրդի Ձայն»-ի № 79-ում Հայկ. Դրամատիկ Ընկերակցութեան վարչութեան պատասխանը 30 ստորագրութեամբ ուղղւած նամակին, պարտք եմ համարում յայտնել հրապարակով, որ ես աշխատել եմ միջին ճանապարհ գտնել վերջ տալու Ընկերակցութեան անդամների մէջ առաջացած դառնութեանը, սակայն կարդալով այդ պատասխանը դուրս եմ գալիս այն եզրակացութեան, որ այդ ճանապարհը չի կարող փրկել Ընկերակցութեանը այն ողորմելի դրութիւնից, որի մէջ գտնւում է այժմ:

Ես կուզէի կանգ առնել այդ պատասխանի մի կէտի վրայ, որը պարզում է ներկայ վարչութեան և նրա համախոհների գործունէութեան ուղղութիւնը, մի բան, որից առաջացել է իմ կարծիքով այսքան աղմուկ խմբ. մէջ և որից այսքան տուժում է մեր սիրած ու փայփայած գործը: «... Մնում է 17 ստորագրող —ասւած է այդ պատասխանի մէկ—որոնցից 13 հոգի կատարել են երկրորդական և երրորդական դերեր... Մնացած չորս անձինք մասնակից են եղել խմբ. գործունէութեան սկզբնական տարիներից, սակայն սկզբում երկրորդական և երրորդական դերերում, ապա վերջին տարիները նրանցից մէկը... պատասխանատու դերերում... և վարչութիւնը անշուշտ խմբակցութեան տասնամեակը առանց այդ «բազմաշխատ» (sic) և բազմամեայ (sic) գործիչների մասնակցութեան»:

Ահա մի հանգամանք, որի մասին վարչութեան [illegible] անդամը և նրա համախոհները մոռանում էին ապացուցել, որ այդ այդպէս չէ, սակայն, որի այդպէս լինելը աչքի էր ընկնում թէ անցեալ և թէ ներկայ գործունէութեան ընթացքում և որի մասին ամենաանկեղծ կերպով յայտնում են այս նամակում:

Ինչ է նշանակում, պարոններ, թէ երկրորդական և երրորդական դերակատարներ են... և մենք տօնեցինք խմբ. տասնամեակը առանց այդ «բազմաշխատ» (sic) և բազմամեայ (sic) գործիչների: Երևի եթէ այդ 20 անձնաւորութիւնների առաջնակարգ դերակատարներ լինէին, ապա այն ժամանակ «բազմամեայ և բազմաշխատ» բառերը չակերտների մէջ չէր դնի: Երևի խմբ. սիրողների այն մասը, գուցէ և մեծ մասը, որը զուրկ է բնատուր մեծ տաղանդներից, կամ այլ խօսքով որոնց չի յաջողւում խաղալ առաջնակարգ դերեր, ուրեմն նրանք նոյն չափով ժողովրդական բազմամեայ գործիչներ չեն, ինչ չափով և միւսները: Թէ նրանք տարին-երեքից են թափում և հազար ու մի զրկանքներ պատճառելով իրենց ընտանիքներին, չեն ծառայում ժողովրդական այդ մեծ գործին:

Ինչն է հապա նրանց աշխատանքը, եթէ ոչ այն միտքը, որ նրանք ևս ծառայելով այդ գաղափարին ունեն իրաւունք մի օր կոչւելու բազմամեայ և բազմաշխատ գործիչներ:

Բանից դուրս է գալիս, որ [illegible] փոքրիկ մասեր կամ [illegible] ընկնում [illegible] մի օր [illegible], ես եմ, որ տարիների ընթացքում աշխատել եմ ու ծառայել ձեզ, իսկ մնացած մանր-մունր մասերը—դրանք դատարկ բաներ են:

Ոչ, պարոններ. թատրոնական գործը մի ժամացոյց է և նրա բոլոր մասնիկներն էլ ծառայում են մի նպատակի, և քանի դեռ արժէն փայլուն մասերը առանց աննկատելի մասերի և ընդհակառակը:

Ահա այն սերմը, որից առաջացել է և առաջանում—է այսքան դժգոհութիւններ սիրողների շրջանում և որի պատճառով նրանց թիւը ոչ միայն չի աւելանում, այլ եղածներն էլ կամաց-կամաց ցրւում են և... թատրոնն էլ կամաց-կամաց դատարկւում:

Միակ ճանապարհը այդ դրութիւնից դուրս գալու՝ հետևեալն է ընդունել 30 ստորագրողների պահանջները, դուրս վանել երկու կողմից էլ բոլոր փթած ու քայքայիչ տարրերը և գործը յանձնել այնպիսի մարդկանց, որոնք խաղում են, կամ աւելի լաւ՝ գործում են ոչ թէ անձնական բաւականութիւնների համար, այլ այն մեծ ու վսեմ գաղափարի, որ կոչւում է ժողովրդական թատրոնի գաղափար: Իսկ այդ կը լինի այն ժամանակ, երբ գործը կը դրւի թատրոնական ամենախիստ դիսցիպլինայի տակ, մինչդեռ որ և ոչ մէկը չհամարձակւի մի փոքր շեղւել գործել այդ ճանապարհից:

Եւ քանի դեռ այդպէս չէ, ես հրաժարւում եմ որևէ կերպ մասնակցութիւն ունենալուց և միացնում եմ իմ ձայնը այն 30 «ստորագրող»-ների ձայնին, ինչպէս անւանում է ներկայ վարչութեան համախոհներից մէկը՝ հիմնադիր անդամ Անտոն Թումանեանը «Հորիզոն»-ի մի համարում:

Մոսաբեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ
Հրատարակիչ՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւն

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋ. ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնւած 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Բաց է ամեն օր, բացի կիրակի օրերից.
«606» եւ «914»-ի ներարկում առաւօտեան ժ. 11—12.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ 11—12 ժ. վիրաբուժութիւն, վեներական (սիֆիլիս) հիւանդութիւններ:
Բ. Փ. ԱՂԱՍԱՐԵԱՆ 10—12 ժ. Ներքին ջղային երեխայոց հիւանդութիւնն և ծաղկահատ.
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—12—1 ժ. մարթա հիւ. վիրաբուժութիւն և վեներակ. (սիֆիլիս) հիւ.
Ե. Ա. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ.
Վճարը 3 ռ.: Զինւորները ձրի: Համախորհրդի և կոնսիլիումի ու օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
0—3 Բժշկապ. Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Հայերի մէջ առևտրական կրթութիւն տարածող Կովկասեան ընկերութեան:
Նիկոլայևսկի № 36.
0—89 Տեսուչ՝ Գ. Կ. Տէր-Դաւթեան

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ“-ի
գրասենեակում վաճառւում է նրա հրատարակութեամբ լոյս տեսած
ԳԵՒՈՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ
ԶԵՄՍՏՒՈՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
ԳԻՐՔԸ
Գինը 50 կոպէկ:
Դիմել գրասենեակ՝ Головинский пр. № 41. 0—76

Տպարան «Մամուլ»—տնօրէններ Մ. Էֆրիկեան և Յ. Մալիքեան, Լօրիս-Մելիքեան փող., № 23.